Հայաստանի Ուսանողական Ազգային Ասոցիացիա

Ներքին Կանոնակարգ

ՆԿ 02-1 առ 11.06.2013

«Գիտական Հարցերի Հանձնաժողով»

Երևան 2013

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Սույն փաստաթուղթը պատրաստվել է Հայաստանի ուսանողական ազգային ասոցիացիա (ՀՈՒԱԱ) ՀԿ կողմից, և նախատեսված է բացառապես այն անձանց օգտագործման համար, ում ուղղված է, կամ նրանց հավանական խորհրդատուներին, ովքեր դերակատարում կունենան որևէ ծրագրի զարգացման հարցում:

Սույն փաստաթղթով սահմանվում է Հանձնաժողովի գործունեության նպատակը, առաքելությունը, գործունեության առաջիկա ծրագրերը, ինչպես նաև հանձնաժողովի անդամների իրավունքները, պարտականությունները և կազմը:

Յուրաքանչյուրին, ով կստանա այս փաստաթուղթը, խորհուրդ է տրվում իրականացնել սեփական վերլուծությունը կանոնակարգում տրված տեղեկության վերաբերյալ:

Փաստաթղթի նպատակը՝ ստացողին օգնելն է կայացնել որոշում Կազմակերպության հետագա գործերում մասնակցության հաստատման կամ մերժման մասին:

© 2013 ANSA. All Rights Reserved.

Ներածություն

Գիտական հանձնաժողովը կազմակերպության կառուցվածքում գործող մշտական աշխատանքային խմբերից է, որի նախագահին նշանակում է կազմակերպության նախագահը, կազմակերպության հանձնաժողովների աշխատանքը համակարգող փոխնախագահի առաջարկությամբ:

Գիտական հանձնաժողովի նպատակն ու առաքելությունը

Գիտական հանձնաժողովի *նպատակն* է կազմակերպել և վերահսկել կազմակերպության աշխատանքների գիտական ոլորտին վերաբերող հարցերը, ապահովել միջբուհական և միջազգային ուսանողական գիտական հագեցած կյանք՝ ազգային մակարդակում ձևավորելով բուհական ուսանողական գիտական ընկերությունների (ՈՒԳԸ) ճկուն և կենսունակ ցանց:

Գիտական հանձաժողովի *առաքելությունն* է բարձրագույն կրթության առկա ձևաչափը դուրս բերել դասագրքերի և դասախոսությունների կաղապարներից և այն հավելել ոչ ֆորմալ ուսուցման մեթոդներով:

Գիտական հանձնաժողովի խնդիրները

Ոչ ֆորմալ ձևաչափի կարճատև դասընթացների կազմակերպում - Սա ենթադրում է թեմատիկ, սեզոնային համալսարանների կամ դպրոցների կազմակերպում: Այս կերպ ուսանողների բուհական կյանքը կհամալրվի այլ ձևաչափի մասնագիտական ուսուցմամբ: Սեզոնային դպրոցները կամ համալսարանները պետք է անպայմանորեն կազմակերպվեն տարբեր բնագավառների շուրջ՝ տարբեր մասնագիտությունների ուսանողների համար:

ANSA Proprietary Information. Patent Protected.
Unauthorized Photocopy and Duplication Prohibited.
© 2013 ANSA. All Rights Reserved.

Ստեղծել ՈՒԳԸ-ների համագործակցության ցանց - լինելով ազգային մակարդակում ամենամեծ ուսանողական կառույցը, ՀՈՒԱԱ-ն պետք է ձեռնամուխ լինի ՈՒԳԸ-ների միասնական և ճկուն ցանցի ստեղծմանը, ուժեղացնելով բուհերի գիտական կյանքի փոխկապվածությունը և համագործակցությունը: Այս ցանցի ստեղծումը պետք է դառնա հանձնաժողովի գերխնդիրներից մեկը, քանի որ սա տարբեր բուհերի ուսանողների համագործակցության, փոխճանաչելիության և շարժունության ապահովման գրավականն է: ՈՒԳԸ-ների ցանցի աշխատանքի համակարգումը հանձնաժողովի պատասխանատվությունն է:

Հաճախակի ուսումնասիրել գիտական, ուսումնամեթոդական ծրագրերը, բացահայտել թերացումները և առաջարկել լուծման նորություններ - Բոլոնյան համակարգի մաս է կազմում ճկուն ուսումնական ծրագրի առկայությունը, որը ոչ միշտ է համապատասխանում հայաստանյան բուհերի իրականությանը: Գիտական հանձնաժողովը պետք է ուսումնասիրի առկա արտասահմանյան և հայրենական ուսումնական ծրագրերը՝ ուսանողամետ կրթությունն առավել արմատավորելու նպատակով: Լինելով ուսանողի ձայնի ներկայացուցիչ՝ հանձնաժողովը կարող է աջակցել և իր ներդրումն ունենալ բուհերի գիտական ռազմավարությունների մշակմանը:

Նպաստել ուսանողների ներգրավմանը գիտական կյանքում - հանձնաժողովը պետք է ամեն կերպ նպաստի ուսանողների հետաքրքրվածության բարձրացմանը և ներգրավմանը գիտական աշխատանքներում, հետազոտություններում, կոնֆերանսներում և այլ գիտական միջոցառումներում: Նույնը կարելի է ասել նաև դասախոսների վերաբերյալ. վերջիններս պետք է օժանդակեն ուսանողական հետազոտություններին, անհատապես աշխատեն հետազոտություն կատարող ուսանողի հետ և իրենք նույնպես պարբերաբար վերապատրաստվեն:

Լինել տեղեկատվության աղբյուր - հանձնաժողովը պետք է պարբերաբար տեղեկատվություն տրամադրի ուսանողներին արտասահմանյան և տեղական բուհերում ուսանելու և դրամաշնորհներ, կրթաթոշակներ ստանալու վերաբերյալ:

© 2013 ANSA. All Rights Reserved.

Հանձնաժողովի ավանդական նախագծերը

Թվարկված բոլոր խնդիրներից զատ կազմակերպության հանձնաժողովներից յուրաքանչյուրը պետք է ունենա տարեկան կազմակերպվող ավանդական նախագծեր: Կազմակերպության Գիտական հանձնաժողովի համար այդ նախագծերը պետք է լինեն.

- "YES (Young Economist Students') Summit" գագաթնաժողովը – սահմանադրում է որոշակի հաճախականությամբ (տարին մեկ անգամ) կազմակերպել հասարակագիտական խնդիրների արծարծման ու դրանց լուծման ուղղված միջազգային գագաթաժողովներ, որտեղ քննարկված հարցերի շրջանակներում կտպագրվեն ուսանողական-գիտական նյութերի ժողովածու:
- Ազգային ինտելեկտուալ խաղերի փառատոն «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» - սահմանադրում է, որոշակի հաճախականությամբ (տարին մեկ անգամ) ազգային մակարդակում կազմակերպել և անց կացնել միջբուհական ուսանողական ինտելեկտուալ խաղեր:

Հանձնաժողովի անդամների իրավունքներն ու պարտականությունները

Կազմակերպության Գիտական հանձնաժողովի անդամների *իրավունքներն են.*

- Հանդես գալ գործունեության բարելավմանն ուղղված նոր առաջարկներով,
- Ազատորեն արտահայտել սեփական կարծիքը,
- Կամավոր ընտրել հանձնաժողովի աշխատանքներում ներգրավվածության ուղղությունը,
- Անհրաժեշտության դեպքում առաջարկել հրավիրելու արտահերթ նիստեր,
- Մասնակցել տարբեր կազմակերպչական աշխատանքներին,
- Ծանոթանալ կազմակերպության բոլոր փաստաթղթերին,

© 2013 ANSA. All Rights Reserved.

- Ցանկության դեպքում մասնակցել նաև այլ հանձնաժողովների աշխատանքներին,
- Տեղեկություն ստանալ կազմակերպության ընթացիկ և առաջիկա գործունեության մասին:

Կազմակերպության Գիտական հանձնաժողովի անդամների *պարտականություններն են.*

- Մասնակցել հանձնաժողովի հերթական նիստերին,
- Կատարել հանձնարարված աշխատանքները,
- Բարեխղճորեն մասնակցել կամավոր սկզբունքով անդամագրված աշխատանքներին,
- Ծանոթ լինել կազմակերպության փաստաթղթերին և գործունեությանը,
- Պահպանել կանոնադրության դրույթները, արժեքները,
- Նպաստել կազմակերպության գործունեության զարգացմանը:
-

Հանձնաժողովի կազմը

Հանձնաժողովը գործում է ազատ անդամակցության և կամավորության սկզբունքով, սակայն անդամների թիվը չպետք է գերազանցի 25-ը: Անդամների աշխատանքը համակարգում է հանձնաժողովի նախագահը:

© 2013 ANSA. All Rights Reserved.